ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«22» հունվարի 2018 թվականի № 04-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի «Պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» № 1510-Ն որոշման 13-րդ կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի (այսուհետև՝ Աշխատակազմ) 2018 թվականի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ղեկավարին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ Աշխատակազմի աշխատանքները կազմակերպել և իրականացնել՝ առաջնորդվելով սույն հրամանի 1-ին կետով հաստատված աշխատանքային ծրագրով:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ